

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

Լ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 15

3 ՅՈՒՆԻՍ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Որդիական բարեպաշտ քին	Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Կոնֆուցիուսի շուրջը	ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Ջուարք Սոննե (Աւիլ Բեյզանե քարզմ.)	ՀՐ. Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
Լիբեր.— (Բանաստեղծութիւն)	ՄԻՍԱԳ ՄԵԾԱՐԵՆՅ
Դրախօսական «Ներկունք»	Տ. Կ. ՉԵՕԿԻՐԵԱՆ
Հոգիին կարօք (Բանաստեղծութիւն)	ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ
Խոսքի փայլեր (Գաւառի կնանկին դրուագ)	ԹՂԺԱԿՅՈՒԹԻՒՆ
Մեծասաններու շուրջը.— Ս. Փրկչի վանք	Գ. ՎՐԻ. ԱՍԼԱՆԵԱՆ

ՇՐՁԱՆ ՄԱՏԻՆ ԳԵՊԻ ՊՐԱԶԻՆԻՍ

(ՏՕԲԹ. ԼԷՈՒՐԸ ՔՍԼԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի օրական բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դրո. եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 րուպի: Թղթասարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առօրէ:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասջելի պայմաններով:

Ձեռն-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیاده غلطه ده (ماسيس) غرضتى اداره مى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

1541555

1541555

1541555

1541555

1541555

1541555

1541555

1541555

1541555

1541555

1541555

1541555

Ծաղկաբուսական թիվ

Թելը, որ այսօր գրեթե բոլոր ժողովրդաց գլխավոր ըմպելիքն դարձած է, այնքան բազմաթիվ ախտակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բուսական դժուար է լավ ընտրութիւն մը ընել: Այդ ախտակներէն մասնք նշանաւոր են իբր ակորտահամ եւ քաղցրաբոյր, մասնք ալ թէեւ նոյնքան ակորտակի համ աւ հոտ լունին, գերազանց են սակայն իբր կազդարիչ եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունի որոնք զինքը կը զանազանեն ուրիշ ախտակներէ:



Սակայն կալ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համահոտ եւ մանաւանդ կազդարիչ եւ զօրացուցիչ անգուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաքոնի քիյը, որ այդ յատկա-

րեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ կառնակի եւ ամէն ճաշակի:

Նավթուեան եւ Իսագուլեան քիյի մեծ վաճառատունը, իր բազմաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է հաշնական զուա թէյ մասնաւոր եւ զեղեցիկ աւաքերով ու կը հրաւիրէ օգտուիլ այս առիթէն բոլոր անոնք, որ կը փոփաքին ունենալ թէյ մը

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէյլան եւ ճապոնի մեղանախտակ թէյեր:

5-10

Ուսագործութիւն մարգարի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբուս եւ կնիստաբան (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարուան գործունէութեամբ մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յարգւոյ յաճախորդներուն թէ բնակարանը փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18: Բաց ի վերայիցալ իւր մասնագիտութենէ կը բաւէ նաեւ նորագոյն մէթաքերով ջղային եւ հագեղան աւ երեւակայական մէն ախտակ հիւանդութիւնները, ինչպէս նէօրաթէնի եւ tic անաւանաւտ աչքի երեօի եւ սւսերու ազեղ եւ ակամայ շարժումները եւ դաշտանի դադարումէ յառաջ եկած ջղային խռովումները եւ երիտասարդական մալիքները, ինչպէս նաեւ գինեմալիքը, մօրիֆունմալիքը եւայլն: Կիրականերէն զառ ամէն օր կէօօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ սրբաթ օրերը ձրիաբար կը դարձանէ վկայեալ աղքատները: 5-10

Աս նոր դիւտի Օրդուան հետ համեմատելով խիստ քիչ կարեւորութիւնն մը ունին: Խողատանձ (սըրաճա) և արեան տկարութիւնն և միւս արեան քէշութեան հետեւնքները, որոնք մարմնոյ տկարութեան նշաններն են, այս պիտի աղետները դարմանող և բժշկող գեղ մը կրնայ միայն ամենա-կարեւոր և ամենաքանդելի բան մը համարուիլ: Ակաւառիկ հիմայ աշխարհիս մէջ կայ գեղ մը բոլոր այն ատերիւս գէմ



Հիշերու վրայ ասոր ուշա-
գրու թիունն ընկ պէտք է:

որ Առեգական միջոցառումների մեջ գտնուած փոշիները չորցնելու և պէս, նոյն հիւանդութիւնները կը բռնկէ :

նաև մարդկային մարմինը շրջապատած բոլոր ախտերը հեռու
կը վերնառն ։

Արեան տկարութիուն ուեցող տղոց կեանքը կը փրկէ :

Բնուր Գեղարծեւիւ Է Գեղարծեւիւ Է Զմիւն:

A LA BRODEUSE AU FIL D'OR



MARQUE

DÉPOSEE

FONDÉE EN 1888

ԱՐԹԱՔԻ Ա. ԽՈՒՄԱՐԵԱՆ

(በ ሀቴ ጊኔ ሲጥብሩ)

Մեծ Շուկայ Գալիազգեքլար Նուրի Օսմանի
Թիւ 5 եւ 11

[illegible]

բաժնէր, գումանէ, ֆախէ, շինել. յե-
տքս ու քօթօն, ֆիշիւի, ֆանելալի, գո-
գի եւ գանձալի բօլդեր, կլապան,
շերմ, փուլ եւ Թրթր եւալլն. ինչպէս նաեւ
աթիւ Թաւիշ, եւ առնց վառ, կառա-
ւած ճաշ-կաւար տանգլաքործաթիւններ,
մեծ ու փ. ք. ծաւալով:

ՕժիՏի համար կ'ընդունուին ամէն տե-
ւոյ յանձնարարութիւններ նրաբաւեռաւ
եղանակաբարձութեան, ԲԱՌՖԻԻՎԵՆԻԻ հիւ-
ղէն զամ, ռուս երկու վճարաւանները կը
հաթաթեն նաեւ ԹԻՅՅՍ ՏԱՅՄԸՆՏ ծանօթ
վճարաւան ապրանքներէն դահլիճներ
ռուսիացիներ եւ արդարապէս ուրիշ ասոր
կաներ, իրաւունքն յարեալման:

Աւելցնաւ գործաւ թիւնն եւ պատգամբի ու-
նէն ճիւղերուն մասնագէտ գծադրիչ մը միշտ
պատրաստ կը գտնուի: Վարձարանաց գը-
նու միւտերն համար մասնաւոր, շէնքէ շէնքուի,
իւնչէն արդէն բոլոր գիշերը շիրտաւոր-
չելի կնի:

1-10

ՄԱՍԻՆ

55^ր ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 15

3 ՅՈՒՆԻՍ 1906

ՈՐԴԻԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ

ԱՋՆ. ԹՈՐԳՈՍԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ

Ծնողաց հանդէպ գիտակից յարգանք, սէր և երախտագիտութիւն ո՛րչափ գեղեցիկ են երբ կ'երեւին չափահասութեան հասած որդւոց վրայ: Մանկութեան մէջ միայն զգացմունք բնազդական են. մանուկը, իր բոլոր պէտքերուն գոհացման համար ինքզինք կախուած զգալով իր ծնողքէն, բնական յարուժ մ'ունի դէպ ի նոսա, ինչպէս իր օտար ստնտուին նկատմամբ ալ որ կը վաճառէ անոր իր կաթը. իր սէրը անձնասիրութիւն մ'է մանաւանդ, իր հնազանդութիւնը՝ երկիւզ մը յաւէտ կամ մանկային հնարագիտութիւն մը, և իր երախտագիտութիւնը, անխորհրդածուած, բաւական տկար է տակաւին չկրնալու համար ընդդիմանալ մերթ անձնահաճ գրդումներու: Զափահասութեան մէջ, երբ կեանքի համար հարկաւոր կախումն ու կապը ա'լ դադրած են ծնողաց ու զաւակաց մէջտեղ, և երբ սոքա ա'լ հասուն ինքնավար էակներ են, այն ատեն ահա՛ առ ծնողս սիրոյն շարունակումը, մանաւանդ թէ աճումը, յարգանքի ու երախտագիտութեան շնչուած զգացումները բարոյապէս զնահատելի հանգամանք մը կ'ստանան ու զաւակաց ազնուութեան ապացոյցը կ'ըլլան: Ծնողական և որդիական զգացմունք ասո՛վ ահա կը տարբերին մարդոց և անասնոց վրայ. այս վերջիններուն մէջ անողեան պէտքի կապն է որ ծնողը, և այն ալ մայրը յաւէտ, և ճագերը իրարու հետ միացեալ կը պահէ, իսկ զաւակաց ինքնաբաւ ըլլալուն հետ կը խզուին ալ ևս յարաբերութիւնք ու ծնողք և ծընեալք անտարբեր կը դառնան իրարու: Մարդ-


կային ընտանիքը կը շարունակէ փոքրիկներուն մեծնալէն յետոյ, ու այդ փոքրիկներուն գորովը մեծերուն համար գիտակցութեան և խորհրդածութեան հետ զուգընթաց կ'աճի ու ազնիւ բնութիւններուն մէջ տեսակ մը պաշտամած ձեւ կ'առնու: Որքան արդար է որ այսպէս ըլլայ. մեր ծնողք հեղինակներն են մեր կեանքին, և ոչ միայն ի լոյս բերած են զմեզ, այլ մեր ախեղծ մանկութեան վրայ ամէն հոգածութիւն ունեցած են մեր ֆիզիքական ու բարոյական առողջութեանն ու զարգացման տեսակէտներով: Ինչ անձնուէր խնամքներ տարած, ինչ ծանր գոհողութիւններ կրած են, ինչ տառապանաց հանդուրժած ու վտանգներէ անցած են՝ երկնից այդ սիրելի պարգեւը, այդ թանկագին աւանդը, մանուկը, անվթար պահելու ու զայն կարելի կատարելութեան հասցնելու համար: Իրենց հաճոյքները ոտնակոխ ըրած են անոր հանգըստեանն ու երջանկութեան համար. իրենք զիրենք կատարելագործել ջանացած են բարի օրինակներ ըլլալու համար անոր, և իրենց կարողութիւնքն ու աշխատութիւնքը բազմապատկած են, կարենալու համար բաւել անոր բարւոյն պահանջներուն: Ո՛րչափ աւելի համեստ ըլլայ ծնողաց կացութիւնը, ա՛յնքան աւելի կը փայլի ծնողաց այս յաճառ ու գոհարեր անձնութիւնը՝ իրենց զաւակաց շահուն: Հոս հայր մը ցերեկուան ժամբէն դուրս գիշերային աշխատութիւններ կ'ստանձնէ, անդին մայր մը տան հոգերէն զատ դրսէն գործ մը կը հայթայթէ, որպէս զի անունդէն դուրս իրենց զաւկին արտաքին բարեվայելութեան պէտքն ալ

կարենան գոհացնել կամ թէ հասնին անոր
կրթութեան ծախքերուն, դպրոցին թոշա-
կին, գրքերուն ծախքին: Սա հայրը, պարզ
սափրիչ մը, կը ջանայ շահիլ խնայել՝ բժշ-
կութեան ուսանող որդի մը պահելու համար
Եւրոպական Համալսարանի մէջ. այսինչ մայրը
սպասուհի կը մտնէ հարուստ ընտանիքի մը
քով՝ զաւակ մը պահել կարենալու համար
գիշերօթիկ վարժարանի մը մէջ: Հիանալի
չնո՞նք ծնողական անձնամոռաց սիրոյ այս ցոյցը:
Ո՛րչափ մեք ամէնքս երախտապատ եմք մեր
ծնողաց, վասն զի տխուր բացառութիւնք,
իրենց որդոց բարւոյն անտարբեր, անգութ
ու եսամոլ ծնողք հազուադէպ են, մանա-
ւանդ միջնակարգ դասուց մէջ, ուր բարձր
դասերու յատուկ հաճոյքներու և արարու-
ղութեանց կեղծ կեանքը չէ եղծած զգա-
ցումներու հարազատութիւնը: Եւ երբ կը
հաստատենք թէ մեր այս կամ այն ազնիւ
ձիրքերն ու կարողութիւնքը, որ պատիւ ու
փայլ բերած են մեզ, մենք կը պարտինք
մեր ծնողաց առաքինութիւններուն, բնական
կամ ստացական յատկութեանց, ո՛րքան սեր-
տիւ մեր կութիւնը բղխած կ'զգանք անոնց
էութենէն ու մեր յաջողութեանց ու փառ-
քին մէջ մե՞ծ անոնց ազդեցութեան բաժինը:

Ուրեմն բոլոր այս բարեաց փոխարէն զոր
որդիք վայելած են իրենց ծնողներէն՝ պարզա-
պէս արդարութեան պարտք մը պիտի ըլլար
որդւոց փոխադարձ սէրն, անոնց գորովա-
գին յարգանքն ու զգածեալ երախտագիտու-
թիւնն իրենց հօր և մօր հանդէպ, արդարու-
թեան պարտք մը որուն կատարումն այլուստ
ա՛յնքան հեշտ և դիւրին կը դարձնէ սիրտը որ
ընտանեկան սէրերու ընազդական յոյզերն ունի
իր մէջ: Բայց այդ պարտքին լիուրի կատա-
րումն ազնիւ հոգիներուն մէջ պիտի գտնենք,
վասնզի միշտ նուազ կը սիրեն որդիք իրենց
ծնողքը որքան սոքա իրենց շառուիղները:
Պիտրախտաբար չեն պակսիր իրանց ծեր ծնողքը
երեսի վրայ թողող, իրենց երիտասարդական
քմահաճութեանց ու զուարճութեանց մէջ
զանոնք մոռցող զաւակներ, անոնց հանդէպ
յարգանքի պակասութեան օրինակներ, պըժ-
գալի ապերախտութեան վարմունք, անի-

րաւութիւնք կրկնապէս դատապարտելի,
վասն զի, ինչպէս ըսուեցաւ, ա՛յնքան դիւ-
րին պարտ էր ըլլալ արդար ու գորովոտ
գտնուիլ մեր ծնողաց նկատմամբ: Այսպիսի
եաց հակադրութեամբ նո՛յնքան գովելի
պարտին ըլլալ աշխուզոյն որդիք որք
իրենց ծնողքը կը չըջապատեն փափուկ յար-
գանքով ու անձնուէր սիրով, որք իրենց
նուիրական պարտք մը կ'ընեն երջանիկ ընել
ու քաղցրացնել անոնց վերջին տարիները,
որք միշտ կը յիշեն անոնց խնամքն, անոնց
խրատքը, ու որչափ և իրենք բարձրացած՝
նոյն խոնարհ ու սատկառոտ մանուկները կը
մնան անոնց քով, նոյնքան բարեպաշտօրէն
կ'ունկնդրեն անոնց խօսքերուն, ու կ'զգու-
շանան փոքրիկ ցաւ մը տալէ անոնց, ընդ-
հակառակն անոնց համար ըլլալով միշտ ան-
հուն գոհունակութեան և երջանիկ նպարտու-
թեան մ'առիթ: Երբ հակառակ իրենց գեր-
մարդկային ճիգերուն վառ պահելու համար
դեռ ընդերկար իրենց ալեւորիկ ծնողաց
կեանքի պլպլուն կանթեղը, անոնց վերջին
ժամը կուգայ, կրօնական երկրւղածութեամբ
մը կը ժողվեն անոնց յետին շունչն ու խօսքը,
կը փակեն անոնց աչքերը, իրենց արցունք-
ներովը լուացուած կը հանգչեցնեն զանոնք
իրենց վերջին բնակարանին մէջ որ ա՛լ նուի-
րական ուխտադնացութեան վայր մը պիտի
ըլլայ իրենց համար, եւ տարիներ ու տարի-
ներ ետքն ալ անոնց յիշատակը յուզումով
պիտի բարախնայէ իրենց սիրտը ու արցունք
պիտի քամէ իրենց աչքերէն: Այդ մահը
մերթ նոյնիսկ աստուածացման հանդէս մը
կ'ըլլայ երանելի ծնողաց, երբ իրենց բարե-
պաշտիկ զաւակներն ըլլալով ընկերութեան
մէջ սիրուած ու յարգուած հռչականուն ան-
հատականութիւններ, իրենց սուգը կը հրա-
ւերէ ցաւակից յուղարկաւորներու մեծ բնա-
մութիւն մը, ու անոնց մէջ՝ երեւելի անձ-
նաւորութիւններ պետական, դիտական,
գրական ու վաճառականական, որք չուք
դնել ու յարգանք ընծայել եկեր են համեստ
արհեստաւորի մը կամ անոր կնոջ յետին մնա-
ցորդներուն: Ի՛նչ յինիչ ու սրտաշարժ տե-
սիլ այն ատեն...

Բ. Յ. ՊԵՐՊԷՐԵԱՆ



ԼԻՏԵՐ

ԱՆԱՆՈՒՆ

Վայրի՛ ծաղիկ, անունդ ի՞նչ է.
Ըսէ՛, մասուր ու կանանչէ
Յանկապատին չուքին՝ նստած
Վայրի՛ ծաղիկ, անունդ ի՞նչ է:

Ըսպիտակ, կաթ ու մաղտաքէ
Բուրող ծաղիկ, անունդ ի՞նչ է,
Ըսէ՛, քիչ մը գէթ չե՞ս դողար
Հովիկն անոյ՜ երթոր փըչէ....

Հըպա՛րտ ծաղիկ, անունն ի՞նչ է
Պայիկին, որ անցաւ քովէդ,
Հեղուկ ու սեւ սաթի վէտ վէտ
Յայտք մը ձըգած իր քամակէն:

Գիտե՛ս, ծաղիկ, անունն ի՞նչ է
Դողին՝ զոր քեզ տըւաւ հովիկ՝
Ու ձայնին՝ որ զիս կը կանչէ....

ՋՈՒՐԻՆ ԴԱՐՅՈՒՆ

Կարմիր հողէ
Սափորն ուսին,
Ջուրէն դարձին
Ջով պուտերով
Պիտի ցողէ՝
Պապակն իմ հուր....

Գուռը թաթխէ
Մատներդ ոսկի,
Ու կուժն ուսիդ
Ջուրէն դարձիդ,
Առանց խօսքի
Ձեռքերդ երկու
Դի՛ր ճակատին՝
Որ պաղըլկի:

Այս իրիկուն,
Բովը ճամբուն,
Սափորն ուսին
Ջուրէն դարձին,

Ոսկեջրած
Սօսին տակ
Երբոր կենայ,
Պիտի ըսեմ՝
Թէ հիւանդ եմ,
Բաղձանքներուս
Վերադարձին
Ըսպասելէն
Այսքան օրեր....

ՄԻՍԱԲ ՄԵՅՍՐԵՆՑ

ԴՐԱՆՈՍԱԿԱՆ

“ԵՐԿՈՒՆՔ,

ԳՐԵՑ՝ Ա. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ

Պ. Արտաշէս Յարութիւնեան իր երկրորդ
բանաստեղծութեան հատորն է զոր լոյս կըն-
ծայէ, Նշան-Պապիկեան մատենադարանին
աջակցութիւնով:

Սօսելէ առաջ այդ հատորիկին պարու-
նակութեան վրայ,—որ Սայապալեանի գործին
հետ միասին գրեթէ ոչինչ կ'աւելցնէ մեր ար-
դէն տմոյն գրակականութեան վրայ,—կ'արժէ
որ քիչ մը ուշադրութիւնը հրաւիրենք սա
կէտին վրայ անոնց, որոնք կոչուած են
գրքի մը կամ հանդէսի մը դեղեցկագիտա-
կան պակասը լեցնելու:

Արդարեւ գնահատելի է որ և է երկասի-
րութիւն մը հաճոյալի եւ սիրուն երեւոյթով
մը հասարակութեան ներկայելու ջանքը,
բայց՝ ատոր մէջ որքան կը յաջողին մեր
հրատարակիչները, ատիկայ միայն կրնան
ըմբռնել գեղարուեստի վրայ ամենափոքր
գաղափար ունեցողները նոյն իսկ: Ճշակն
է որ կը պակսի ընդհանրապէս այս հրատա-
րակութիւններուն մէջ: Art nouveau անու-
նով կարգ մը տձեւ զարդեր կուգան յաճախ
տձեւութեան մատենել բաւական լաւ տպուած
հատոր մը, ինչպէս է Պապիկեանի հրատարա-
կած Երկունքը:

Նոր բանի մը փարիլը այդքան խանդով՝
կարելի է հասկնալ և ներելի, մանաւանդ

երբ ան իր մէջ ունի գեղեցկութիւնը լրացնող տարրեր, բայց պէտք է օգտուիլ զիտնալ անկէ յաջող կերպով և լաւ ընտրութիւնով: Այդ ընտրութեան մէջ է որ նուրբ ճաշակ մը ամենէն աւելի պիտի ունենայ իր մասը: Այդ ճաշակը կը պակսի մեր հրատարակիչներուն քով. ինչ որ պարզապէս menuet մը կամ affiche մը վրայ կ'ընար պատշաճօրէն զետեղուիլ, կը կոչուի զարդարելու բանաստեղծութեանց հատորի մը կափարիչը, կամ թերթերուն փոքրիկ միջոցները: Ասիկայ ծիծաղելի է պարզապէս անոր համար որ՝ ցոյց կուտայ թէ ինչ ըմբռնում ունինք գեղարուեստի մասին, և ո՞րքան կրնանք օգտուիլ գեղեցկագիտական դրածերու համադրութենէն մեր ընտրողութեան մէջ: Կը ձգտինք art nouveau ընդօրինակել, այդ ընդօրինակութիւնը սակայն անիմաստ քանի մը դարձգարծիկ մութ գիծերու անձուկ չըջանակէն բնաւ վեր չի բարձրանար: Ոչ մէկ խորհրդանշանող բան կայ անոր մէջ: Յետոյ, ինչ որ ամենէն կարեւորն է, և մեր գեղարուեստի ըմբռնումին ամենէն թերի մէկ կէտը վեր կը հանէ, այն ալ խառն ճաշակի մը արտառոցութիւնն է: Թերթի մը կամ հատորի մը պատեանը նոր արուեստի մը դարձգարծիկ անիմաստութիւններով զարդարելէ վերջ, անմիջապէս անոր մօտ կը զետեղենք ստուերաւոր Ornamentsներ, գրքին անունը և յարակից պարագաները պարզ գիրերով, սովորական գրքի գիրով. որոնք բոլորովին օտար նոր արուեստի ձեւականութենէն, զուրկ անոր հետ նմանողութեան եղբրէ, իրենց տեսակին մէջ եղական խառնուրդի մը տիպարը կը յօրինեն:

Հրատարակութիւն մը որ գեղեցկագիտական հակումներ ունենալ կը թուի, պարտի համեմաշխ ըլլալ իր բոլոր տարրերուն մէջ. իր բոլոր գեղարուեստական նրբութիւնները ամբողջի մը միաւորող տարրերը ըլլալու են:

* * *

Հիմա տեսնանք ուրեմն թէ Պ. Ա. Յարութիւնեանի բանաստեղծութիւնները ո՞րքան

ունին իրենց մէջ բանաստեղծական դրոշմ և զիտենք ինչ որ կայ իրական արժանիք անոնց մէջ:

Յառաջաբանով կըսկսի գիրքը, ուր բանաստեղծը վարպետի ինքնավստահութիւնով կը խօսի տափակ, նոյն իսկ քիչ մը շատ տափակ լեզուով մը, և արդէն պէտք չի կար երկու էջ նուիրելու 33 կամ 34 բանաստեղծութիւններու համար, որոնք ատանկ նախերգանքի մը կարօտ չէին ընաւ:

«Բանաստեղծութեանց այս պղտիկ հատորը, մասնաւոր ծրագրի մը համաձայն պատրաստուած երկասիրութիւն մըն է» — կըսէ Պ. Յարութիւնեան, բայց քիչ մը հակասութեան մէջ կը դնէ ինքզինքը երբ յաջորդ էջի մը մէջ կը շեշտէ — «Երկունքը տրամաբանական կապ մըն է Լքուած Բնարին ու Նոր Բնարին միջեւ»: Քանի որ երկունքը տրամաբանական կապն է՝ Լքուած Բնարը և Նոր Բնարը իրարու յօդող, ուրեմն ծրագրի մը գոյութիւն ունենալէ չի դադարիր և այդ ծրագրիին ամբողջութեան մէկ մասն է Երկունքը: Ասկէ վերջ կէտ մը կայ որ ամենէն աւելի ուշադրութիւն կը գրաւէ: Ամէն արուեստագէտ, ըլլայ գրագէտ, բանաստեղծ, նկարիչ, քանդակագործ, երգահան, իր արտադրութիւններուն մէջ աստիճանական յառաջդիմութեան մը և կատարելութեան մը շեշտը կը դնէ: Ասիկա շատ բնական է: Խակ ուժերու սկզբնական տատանումներէն վերջ, միտքը անգամ մը երբ իր ուղին դժէ, աւելի վստահ կընթանայ, և դանդաղ կատարելագործում մը իր իտէալին կը մօտեցնէ հետզհետէ արուեստագէտը: Այս տեսակէտով, Պ. Յարութիւնեան ձախող գործ մը կատարած է՝ իր նախկին տհաս արտադրութիւնները, բաւական լաւ գործէ մը, «Լքուած Բնար»էն վերջ հրատարակելով: Փափաքելի էր զինքը այս նոր հատորիկին մէջ տեսնել այն՝ ինչ որ չէր Լքուած Բնարին մէջ: Պ. Յարութիւնեանի հատորիկը, ծայրէ ծայր իր եսին փառաւորումն է. ինքզինքը, իր զգացողութիւնները, իր հոգիին ստացած ձգտումները մե-

զի ծանօթացնելու ահագին մարմաջ մը ունի. իր մէջ ամէն բան կը հիւծի, կը հատնի, կ'ոչնչանայ, կը բլկաւորի: Բաւական զգայուն սիրտ մը ունենալ կը թուի, քիչ մը տխուր հակումներով: Բայց իր ոտանաւորներուն քանի մը յաջորդական ընթերցումներէն վերջ, մարդ կը համոզուի թէ քիչ մը չափազանցութիւն կայ անոնց մէջ և այդ ալ հարկաւ դիտումով: Յետոյ ոտանաւորներուն գրեթէ մեծագոյն մասին մէջ աններդաշնակութիւն կայ, ինչ որ արուեստի գործի մը, մանաւանդ բանաստեղծութեան հատորի մը մէջ, — ուր շատ խորունկ նիւթեր չեն որ կը չօչափուին, ուր մաքուր, զուտ, իրական ներշնչում մը հազիւ քանի տեղեր զգալի կըլլայ, — էական է: Հապճեպ ընտրութիւն մը կայ բառերու, չուկայիկ ասութիւններու, խորթ, կոկորդային, դժուար արտասանելի: Օրինակները աւելորդ պէտք է նկատել. արդէն ամբողջ հատորին, իւրաքանչիւր ոտանաւորին մէջ գոյութիւն ունին այդպիսի տողեր: Գրական նրբութիւնը, հատածներու անսեթեւեթ՝ այլ սիրուն յօրինումաւթիւնը, քանի մը նկարագրական ոտանաւորներու, ինչպէս 17րդ էջ վերջալուսայինին եւ 20րդ էջ գիշերայինին մէջ կը տեսնուին: «Առաջին սէրը» 31րդ էջ, անկեղծ ու սիրուն խոստովանութիւն մըն է:

Պ. Յարութիւնեան աւելի յաջողած է այն ոտանաւորներուն մէջ որոնք նկարագրական են, և բանաստեղծութեան այդ genreին մէջ թերեւս լաւագոյն յաջողութիւն գտնայ, եթէ ձգէ սա իր հոգեկան կէս մը կեղծ տառապանքներուն անվերջ շղթաներու շարքը, որոնք *décadent* ըլլալու ձգտումի մը արդիւնքն են:

Տեսակ մը նրբացած և *naturaliste* Դուրեանականութիւն կայ բանաստեղծին գործին մէջ, թէեւ ազդուած կ'երեւայ Պատլէռէ, Վէռլէնէ և «տէքստան»ներէն, որոնց սակայն ներշնչումին բարձրութեան չէ կրցած հասնիլ բացառիկ տողերէ զատ ոչ մէկ տեղ: Լաւ կըլլար եթէ Պ. Յարութիւնեան ջանար մեզի բոլորովին ինքնուրոյն բանաստեղծութիւններու շարք մը տալ, Rameauի նման,

գեղջուկ, գաւառային կեանքի հանդարտ, շինական, անժխոր գիւղանկարներով համեմուած, դաշտերու քրտինքով օծուած. աւելի կորովի եւ աւելի յատկանշական պիտի ըլլային անոնք: Հետեւակութիւնը ամէն բանի մէջ հասկնալի է, բայց բանաստեղծութեան մէջ կորսնցնել կուտայ նոյն իսկ գրողի մը քով գոյութիւն ունեցող թանքուն արժանիքները, գրողին ինքնատպուլթեան հակումները:

Բոլոր իր բանաստեղծութիւններուն մէջ Պ. Յարութիւնեան անգամ մը միայն ջանացած է *original* ըլլալ, խոշոր «հէյ» մը դնելով «Ամպերուն» անուն ուռուցիկ բանաստեղծութեան մէջ:

«Ամպեր, սեւ ամպեր, հէյ, ո՛ւր կը թռչիք» եթէ ոչխարներու հօտի մը, կամ արջառային երամակներու նկարին մէջ դրուէր այդպիսի բառ մը, իր գոյութիւնը կ'արդարանար, բայց հոտ հաւատացէք շատ անտեղի է այդ ձայնարկութիւնը: Եւ յետոյ, քանի որ հեղինակը սրտիկէն մաս մը, համբոյրէն կրակ, աչքերէն բոց, կուրծքին խորերէն հեծեծանք, իր սէրէն կայծ, աչքերու ցօլքէն, հառաչներէն վանկ մը մոլորուն պիտի յանձնէ հսկայ ամպերուն որ տանին այն հեռաւոր մարգերուն մէջ ապրող իր սիրելիին, կ'արժէր որ աւելի փափուկ կոչականով մը աղերսէր ամպերուն որպէս զի անոնք ալ չի վշտանային ? և թերեւս այդ է պատճառը որ ամպերը հեռացան լուրջ ու անտարբեր:

Անարդարութիւն պիտի ըլլար Պ. Յարութիւնեանի գործը անարժէք նկատելը. ընդհակառակը անոր մէջ կան կամ կը նշմարուին այնպիսի յատկութիւններ որոնք բանաստեղծի մը գոյութիւնը կը շնչոտեն: Կան տողեր, նոյն իսկ քանի մը ոտանաւորներ որոնք շատ յաջող են: «Դիշերային»ը հմայիչ է. —

Ու փոսփորալոյս կայծոռիկներու
Բոյլ մը կ'ակօսէ մութն ստուերակուռ
Ընդհատ երիզ մը նուրբ ու ոսկեհուն,
Ինչպէս անկումը վերն ասուպներու:
Այսպէս միւս տուններն ալ այս ոտանաւորներով:

ւորին ներշնչումի միեւնոյն բարձրութիւնը | գրագէտի և բանաստեղծի étoffe մը, և
կը պահեն: 63րդ էջ «Պատկեր մը»ի չիւտը | կը տատանի ու դեռ չէ գտած իր ուղղու-
շատ սիրուն է: Բայց ինչպէս ըսի, Պ. Յարու- | թիւնը որ, հարկաւ, զինքը իր գրական հա-
թիւնեան աւելի իր վերջին գործերէն կ'ար- | կունենորուն ինքնուրոյն ուղիին մէջ պիտի
ժէ որ դատուի, որոնք հարկաւ կատարելա- | դնէ: Սպասենք «Նոր Բնարին» որուն մէջ
գործումի ենթակայ եղած են, և ինչ որ | անշուշտ աւելի նոր և թարմ արտադրու-
դիտեցինք թերի իր գործին մէջ, բնաւ կա- | թիւններ տեսնելու և վայելելու գոհունա-
րողութեան մը ուրացումը չէր: Ինքը ունի | կութիւնը պիտի ունենանք:

S. 4. ԶԷՕԿԻՐԵԱՆ

ԱՇԽԷՐԷՅԵԱՆ

ԶՈՒԱՐԹ ՍՕՆԷ

(Sonnet joyeux)

Սէրն ու մատղաշ ձեր հասակը, սիրահարներ դեռատի,
Ձեն ախորժիթ թաց աչքերէն ու ձայններէն տրամալի.
Ու ես որքան կը մեղքընամ ձեր սիրելեաց, երբ տրտում
կ'երթաք անոնց պատշգամին տակ հառաչել անդադրում:

Ու կը լսէք, վա՛րը հեռո՛ւն, երգը զուարթ սոխակին,
Ծառուտին մէջ բոյն հաստատած կը դայլայլէ խնդազին.
Բայց երբ ուղէք կոչտ քայլերով իր արտիկին երկիւղ տալ,
Ան շուտ հրաժեշտ կուտայ բոյնին, հրաժե՛շտ կուտայ երգին ալ:

Սէրն ա՛յսպէս է. ուրեմն ո՛վ դուք, սիրահարներ դեռատի,
Մի՛ մի՛ փորձէք փախցնելու ձեր երգերով տրամազին
Այս թռչնիկը որ կ'երգէ հո՛ն ուր բիւր վարդեր կը ծաղկին:

Երանութիւն իսկ է Սէրը. զուարթներուն կը միտի.
Ու թուփերուն ծոցը հանգչող սոխակին պէս, Սէրը միշտ
Իր համբոյրներն հաստատէ լո՛կ ժպտի ծաղկանց մէջ անվիշտ:

Achille Paysant

Թարգմ. ՀՐԱՆՏ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ՄԵՆԱՍՏԱՆՆԵՐՈՒ ԶՈՒՐԶԸ

Ս. ՓՐԿՅԻ ՎԱՆՔ

Օրտուզի Ս. Փրկչի վանքը եւ հնա-
դարեան ուխտատեղիները հաւատաւորին
վրայ խորհրդաւոր ազդեցութիւն մը կը
գործեն։ Մայիսի գեղածիծաղ, հմայքոտ,
վարդ առաւօտ մը, ձիերու վրայ կը նետ-
ուինք, տուներու դանդաղ կեանքէն մայր
բնութեան ծոցին մէջ երթալու և գարնան
կեանք մը զգնելու իղձով։ Քաղքին ճանր-
ներէն կ'անցնինք. քայլ առ քայլ սքանչա-
ցումներ, հիանալի բնական ծիծղուն ու
ցնցղուն պարզումներ կը գրգռեն ու կը
գգուեն անյորդը. փողոցադռներէն ներս
կիներ ու աղջիկներ գրաւած են ընդարձակ
գաւթներն, համակ ցուցադրութեամբ ճոխ
զարդեղէններու ու նախուն զգեստներու.
բռնուած են կրակոտ, զուարթ ու գերա-
զրգիւ խօսակցութեան, սրտերնին թրթռուն,
հոգինին թաղծուն, ձեռներնին դողդոջուն,
չուրթերնին ժպտուն, զի սպասելով կըսպա-
սեն աղւոր բաղդի. այսօր Վիճակ է, Հա՛մ-
բարձման Տօնը. արուեստագէտ պառաւնի
գիտեն այս օրիս շատ արժեցնել ինքզինքնին
նորահասներուն, որոնք տարին ի բուն
«Վիճակ»ին են սպասեր. ասոնք թող իրենց
բաղդին հետ խաղան։ Մեր աղայութեան
երջանիկ օրերը կը մտաբերենք, երբ այս
պիսի սովորութիւններ ու անմեղ խաղեր
նոյնպիսի կը հետաքրքրէին զմեզ եւ նուազ
բերկրութիւն ու ցնծութիւն չէր որ կ'առ-
թէին. մտքի այս թարթափումով քովընտի
ծուկումով փողոցներէ բաց դաշտը կ'ել-
նենք։ Երկինք համակ կապկապոյտ կոհակ-
ներով կը ճողփայ և անուշ արեւին հուր ու
բոցը կը ժայթքէ կապոյտին մէջ որ իր դէզ
դէզ կոհակներուն տակ կը ծածկէ, կը մարէ.
հեռուն շրջանակի մը վրայ ճերմակ ծուխ
ալեակներ ամպի՛ կը ծփծփան ու կը չփչփան,
արեւին ու կապոյտին մէջ. վարը զինդ ա-
ւելի կը գգուէ ու կը շոյէ. մեծատարած

դաշտը կանանչ չղարչի մը մէջ զմրուխտ
այտերով և ազդող գեղով բիւր բիւրուց
հիւսվառ երեւումներ ու ցուցադրութիւններ
ունի ճոխ ու այնչափ շռայլ. խնկալից տուն-
կեր ու ածուներ, հովտաց շուշաններ, ջրա-
լից մարգեր, լուացարանէ ելած մաքիներ,
սատանորդի այծեր, պտիկ ուլեր, անմե-
ղուկ գառներ որոնք կը ցատքոտեն. գեղեց-
կութիւններ անթիւ, մէկայից բուրուսներ
անհամար. ոչ մէկ տեղ ամուրթիւն. ընդ-
հակառակը բնութիւնը երկորեակներ ծնած
է. հոս ջուր ու հող, ուռներն հազարաւոր
է, բարտին բիւրաւոր, խոյոր հպարտ ըն-
կուզներն ձորերէն դուրս տուած է իր կափ-
կանանչ ձիւղերն ու թերթերը, և նշներն
պահուրտած թաւուտ թփերուն մէջ. որ-
թեննին ծլած, նռներն ծաղկած է, հարսնու-
կը շահաքրամն ու մեխակը, օձածաղիկն ու
խաթունիկը պար բռնած են գիրգ ու քըն-
քուշ։

Կառուղին կը թողունք և կը մտնենք
Օրտուզի դաշտը, Չայիր-Պալիէն։ Քաղքիս
արեւելեան կողմը բլուրի մը վրայ կը գտ-
նուի Ս. Փրկչի վանքը իր մենաւոր ու դա-
րաւոր դրութեան մէջ։ Պէկ-Տաղի շրթա-
ներուն ստորոտը նստեր է Ս. Լուսաւորչի
վանքը, հնութեան կողմէ ոչ նուազ պատ-
կառելի Ս. Փրկչէն։ Մէկուկէս ժամէն Օր-
տուզի գիւղը կը մտնենք, Փլիլկած անձեփ
և ծուխ ու մուխէ սեւցած խոտոր փողոց-
ներէ կը քալենք, չորս դիերնիս անվերջա-
նալի շարք մը ազդեղութեան. կիսամերկ
աղտոտ աղաքներ, ցնցոտիներու մէջ փաթ-
թուած կիներ, պատերու տակ յօրանջող ծոյլ
աղամարդիկներ օրն ի բուն ասդ անդ բնոր-
նացող. դարչահոտութիւնը միւսս դիէն
զղուանք կ'առթէ մեզ. մինակ առատ աղ-
ւոր կանանչութիւնն է որ այս ամէնը իր
մէջ կը պարտկէ, ճաշակին ու անճաշակին,
զեղին ու ազեղին խառնուրդն հոս մերկա-
պարանոց կ'ըմբշամարտի, ծանր թախիժէ մը
կը պրծինք, երբ գիւղին քարէ կամրջակը
կ'ողջունենք. ասկէց դառ ի վեր, ա'լ վան-
քի ճամբան է, կը ցցուինք դէպի վեր, նա-
խապէս շռայլելով սիրտ հոգիի խունկն ու

մոմ — աղօքթի մրմունջներ։ Վանքը ընդարձակ բլրակի մը վրայ տարածուած է, ունի հնադարեան պատկառելի հնութիւն մը եւ սրբադէրձ մը երկնաւէտ։ Սրբազան Առաքեալի մը դաստակերտը կը պարունակէ իբր Մասունք։

Այս վիթխարի շէնքին ընդարձակութիւնը եւ ճարտարապետութիւնը կ'ապացուցանեն թէ բարեպաշտական մեծագումար նուիրատուութիւններով կանգնուած է. իսկ վկաներն են հսկայ յաղթ սիւներու հիմաքարերն գեղակերտ եւ գունագեղ մարմարեայ. հապախաչաքարերն ու սեղանաքարերը, եւ շինութեանց բեկորներն ու առատ մատուռները։ Ըստ աւանդութեան, վանքի սրբատաշ քարերէն 40 աչք վիթխարի կամուրջ մը շինուած է եւ այսօր ալ նորէն կը շինուի քարի այդ ցանցնուքներովը. այժմեան շէնքը անշուք ու պարզ է. մէկ կողմը ամբողջ միայրակ սենեակներ կան 12ի չափ, միւս կողմը գոմ, ախոռ, յարդանայ. իսկ մէկ մասը՝ Տաճարն ու երկու մատուռներն են կուռնդկուռ համակ քարակոփ. մինակ տաճարին վրան բաց է. սիրուն եւ տարածուն բակ մը ունի, առուակով մը եզերուն եւ ուռնիի ծառերով հովանաւորուած. երկու մատուռներուն մէջ կը կատարուին պաշտամունք. Տաճարին մէջ կայ 4 կանգուննոց վէմ-քար մը. դրան քարերն ամբողջ մարմարիոն են. կը շրջինք մէն մի վայր սքանչացումով ու պաշտումով մը. հնութեան տեսակէտով ալ թանգարան մը, կամ աւելի ճիշդը խաչ քարերու միւսէօն. հոգեպէս պաշտանքն ու պաշտամունք Փրկչի վանքին հզօր դրոշմ մը կը թողուն բարեպաշտներու սրտին. ուխտաւորին համար վանքէն ներս կրօնական կեանք եւ երանաւէտ անմահութիւն կը բուրէ։ Վանքին մէջ կը մնան ուխտաւորներ շատ երկար. ուխտը հաւատացեալին համար հոգեկան պէտք մը դարձած է. այս պաշտումի ու պաշտամունքի արտայայտութեան մէջ կեղծիք բնաւ չկայ. ուխտաւորին ջերմեռանդ աղօթասացութիւնը իր մէջ կը պարունակ-

կէ նուրբ ու սուրբ հուրք մը անշեկ ու կածկուն։ Վանքն ունի 5—6 կտոր արտեր, իսկ ջուր՝ առուակով մը միայն կարելի է գոհացնել. հասոյթի զխաւոր աղբիւրները կը պակսին, արտ, ջուր, ոխար ու կալուած. մինակ ուխտաւորին նուէրը կայ. վանքին շրջափակէն դուրս գերեզմաննոց մը կայ. կը փութանք դէպի դառիվայրը, քսան տարու ալեփառ ծերունիի մը՝ մեծիդան «Չինար»ին որ բլրակին ոտքը բուռնած է։

Բարձր ու բրգաձեւ լեռնակ մը որ հպարտօրէն ցոյց կուտայ մեզ իր կանաչաժեռուտ հաստ կողերը. անարծաթ բոշկի մենաստանին գեղադուարթ հովտէն բղխող Բունար-Պաշիի գետակը կուգայ մանուածապատ պատյաններով, կը խոնարհի խորախոր ասարտարոտներէ վար, կը ջրէ շէն ու շինական ու կը թրջէ անկուշտ արմատները «Չինար»ին. անհամար ծառեր ու թփեր անոր հովանիին տակ անուշ անուշ կը սրտփան գաղտագողի համբոյրներով. «Չինար»ին բարձրութիւնը մէթրներով կը հաշուի, տարածութիւնը լայնանիստ է, բունը խոռոչաւոր ու գետնահաւասար, երեք խոյր ճիւղերու բաժնուած. լայն շերտ մը անջատուեր ու անճիտուեր, գացեր ջրին եզրը վրան կազմեր է. մէկ մասը դէպի վանք, իսկ միւսն աւելի ճամբուն կողմը հովանաւորեր. բունին ամբողջ տրամագիծը 20 կանգուն է, փորին մէջը 20 հոգուց աւելի կրնան բռնել. ասով ամէն ոք կը հետաքրքրի, հաստաբուն է ու հաստատուն, թիկնեղ ու կաշնբուն, ճիւղերն ալ անթիւ. ընդարձակ տան մը տեսքն ունի։ Չինարը, հակառակ գետակին մօտ գտնուելուն, ո'չ գարնան ջրի պռթկումներէն կը սոսկայ ո'չ ալ աշնան յորդումներէն կը դողայ, ո'չ երկնքի գօռ ու գոշ շանթ կայծէն կը սահմակի, ոչ ալ օսո բարձունքներէ փշող ձմրան ցրտէն ու պարթքէն կը կարկամի. ամէն գարնան կը հազնի երիտասարդութեան անկարանի կանանչ վերարկուն, նախուն խորոտիկ, հակառակ իր հինցած ալեւորութեանը, ու նուիրական նա-

հապետի մը պէս այնչափ հիւրնկալու է ան-
խտիր, և կը քած՝ անուշի մականունն ու
թուականի փորագիր խաչերուն տակ. փայ-
տի մագաղաթ մըն է էջերով լեցուն. քա-
մալն ի վար առեր է քուրջերէ վերարկու
մը որ մէկը բռնես հաղարը կը փրթի, ցու-
ցահանդէս մը կամ արուեստահանդէս մը
քուրջերու անթիւ ու անհամար. ասոնք
նահապետին նուիրուած են փոխարէնը ու խ-
տի կատարում եւ հիւանդութեան բուժում
ստանալով. ամէն ոք ուխտաւորի մը պէս,
չափ անգամ աւելի ջերմեռանդ երկիրդած
ու պատկառոտ զգացումով կը հանգչի դա-
րափառ հովանիներուն տակ. քովիկն ունի
դրացի քաղցրահամ ջրի աւազան մը որուն
մէջ ջուրը կ'երգէ պօ պօ. ամառուան սա-
օրերուն աւելի են իր ուխտաւորները. իսկ
հովուին ու հովուհիին մենավայրն ու տա-
նարը սիրոյ ուխտին, Հիւրասիրեց մեզ իր
պաշտելիութեան առարկայ դարձած այս
Ձինարը. չորս ընկերներ ունէի ու չեմ գի-
տեր թէ անոնց ուխտն ինչ էր, անշուշտ
իւրաքանչիւրն իր խնդրանքն ունէր, իսկ
իմս՝ անուշ զեփիւռին տատանման ու փայ-
փայման, և գարնան աւետաւոր վերադարձի
ցնծման երգերու ունկնդրել էր. այնքան
չքեղ ու փառաւոր խոտէ գորգերու վրայ
նստած, պարզ ու համեղ հացասեղանը
բաց, սկսանք անկաւորէն ճաշակել. ընկեր-
ներէս երկուքը քահանաներ էին: Հեռուն
լեռներու անմատոյց գագաթներէն վար ի-
րիկնամուտը խաղալով ու ստուերելով կռ-
գայ մեզի, ու մենք կը բաժնուինք ծերուկ
նահապետէն: Կը դառնանք վանք եւ երե-
կոյեան ժամերգութիւնը կը սկսի. մատուռը
կէս-մութ կէս-լոյս, աւելի պաշտելի, խոր-
հրդաւոր ու սրբաբոյր դարձած է, խոնկի
ծուխերով հրեշտակային քաղցր մթնոլորտ
մը կը ծանրանայ վրանիս. մատուռին խորը
պարզ սեղանի մը վրայ սրբութեան, հա-
մեսութեան տիպար Կոյսը մայրական է՛ն
անուշ ու գորովալից փարուժով մը կուրծ-
քին ու կշտին սղմած է Յիսուս Մանուկը.
երկու պղպաճոյ լոյսեր խորհրդաւոր վիճակ
մը կուտան ծոցի ու զաւկի, որոնք

սիրած են այս գեղջուկ ու համեստ լոյսը:
Մանկան զմայելի գրաւիչ գեղգեղը կը
խառնուի հասակաւորներու բամբ ձայնին և
երթալով կ'արձագանգէ ու կը հասնի կ'ազ-
գէ հոգւոյն խորը. ուխտաւորներու մէջ 10-
12 տարեկան տղեկ մըն ալ մօրը կշտին կե-
ցած է եւ պիչ ու ապուշ կը նայի Մանուկ
Յիսուսին, աղաչողի մը դիրքով, եւ սակայն
անգիտակ ու անխօս և ձայնը կոկորդին
մէջ խղդուն. մօրը սրտին մէջ բացուած
վէրքը խոր ու խորունկ է, քանի կը նայի
իր գրկհատորին՝ այնչափ կը վերաւորի ու կը
թարախոտի ամէն անգամուն փոխան փա-
նասէի ու բալասանի սուր ու կծու փշիկներ
ընդունելով տղուն ախտին ի տես. յանկարծ
տղան կը փրփրի, կը գալարի, անդամները
կը կարկամին, ակունքերը կը կճրտին, չրթ-
ները կը փրփրին. ի դուր հէգ մայրը տղան
իր ծոցին մէջ սղմել կը ճգնի. դիւային
ախտը զայն զգետնած է. ամենուս աչ-
քերն այս խեղճին ուղղելէ առաջ Ման-
կացեալին կը սեւեռենք խնդրելով որ իր
հրամայական չեշտը հոս ալ ընէ. «Ե՛լ
ատկէց ու վաղէ ջուրին»: Մայրը ա՛լ ան-
համբեր ու սրտմտած, առնական ոյժով մը
տղան առածին պէս դուրս կը սուրայ և սեն-
եակներու մէկին մէջ ամէնէս պահուրտած,
կը սկսի հեկեկել ու սրտհատորին անունը
ձայնել ու ձայնել: Ու գիշերը տարածուելով
վանքին վրայ, այս ամենը կը թաղէ իր
ստուերներուն մէջ:

ԳԷՈՐԳ ՎՐԴ. ԱՍԼԱՆԵԱՆ

Մայիսիս, 18 Մայիս

ՌՕՊԷՐԴ ԳՕԼԷԺԻ այս տարուան 12 շըր-
ջանաւարտներուն վեցը Հայ են և հետեւ-
եալները, որոնք իրենց վկայականն ստա-
ցան չորեքշաբթի օրը. վարժարանին ամա-
վերջի հանդէսին մէջ.— Պ. Պ. Լեւոն Ծէզ-
վէճեան, Յակոբ Անտոնեան, Դրիգոր Նար-
լեան, Յարեթ Փափազեան (Կ. Պոլսեցի)
Յակոբ Միսքեան (Էնկիւրիցի) և Կարապետ
Յակոբեան (Էսկիշէիցի):

ԿՈՆՔՈՒՌԵԱՆ ԳՐԱՎԷՃԸ

Զինագնտակի մը պէս, որ որքան գըլտորի սարերն ի վար՝ այնքան կը սքուարանայ ու մեծազանգուած կը դառնայ, Կօնքուռներու թարգմանութեան շուրջը բացուած ծանօթ գրավէճն ալ, քանի՜ կը մօտենայ իր վախճանին՝ այնքան ծաւալում կը գտնէ ու կը ճիւղաւորի, — թէեւ հալելու սահմանուած, աւա՛ղ, ամէն լրագրական վէճի պէս:

Մասիսի համար փակուած հռչակեր էինք այս խնդիրը. և ահա՛ կըստանանք նոյն նիւթին վրայ ընդարձակ յօդուած մը Ռ. Յ. Պէրպէրեան էֆ.է, որուն պատասխանի իրաւունքը վերապահուած էր արդէն իմքագրութեանս կողմէ: Յաջորդ թիւով ուրեմն, Ուսուցչապետին «Վերջին խօսք»ը:

Նախորդ երկու շաբաթներն ալ ամուլ չանցան, սակայն, այսինքն առանց Կօնքուռեան վէճի, որ ինքզինքը փոխադրուած քտաւ յանկարծ Բիւզանդիոնի մէջ: Ճանչնալով մեր յարգելի պաշտօնակցին հեղինակաւոր դատողութիւնը, հետաքրքիր էինք տեսնելու որ «Դեռահաս միջակորեար»ին թարգմանութիւնը ինչ նոր տաքնապներէ պիտի անցնէր այդ օրաթերթին սիւնակներուն մէջ ուր Տիգրան էֆ. Ելքէնճեան, մեր ներհուն աշխատակիցը, յաջորդական երկու յօդուածներով ջախջախիչ հարուածը տուաւ Մալխասեան հնարքներուն: Իր գրքուածքը, խիստ ու հեզնախառն թէեւ, կատարելապէս լրջութեան սահմանին մէջ, սա գերազանց առաւելութիւնն ալ ունէր որ այս գրավէճը կը վերադարձնէր իր չուկէտին, կը տեղաւորէր իր նախնական ուղիղ գծին վրայ, մինչ զայն շարունակ անկէ հեռացնելու համար յուսահատի գերագոյն ճիւղեր կընէր «Ռընէ Մօբընէն»ի թարգմանիչը այն բոլոր թերթերուն մէջ որոնք անկողնիա-կալօրէն հիւրընկալած էին իր պատասխանները և վերջապէս ձանձրացած: Պէրպէրեան էֆ. ի համար կարելի է ըսել թէ բազմաթափանակեայ վարչիոյ կուշտ ճաշակով, տեսակ մը

դաստիարակիչի շնչով խօսեցաւ իր երիտասարդ ընդդիմախօսին հետ. մինչ Ելքէնճեան էֆ.ն, հնարքներու աւելի թափանցողութեամբ և աւելի ուժեղ ձեռքով մը բռնեց միեւնոյն ընդդիմախօսին օձիքէն ու mise en demeure ըրաւ զայն՝ վերադառնալու իր թարգմանութեան սխալներուն: Այս վերջինը լուռ չէր կրնար մնալ, եւ փորձեց պատասխանել զոյգ մը յօդուածներով ուր կային, ի մէջ այլոց, Բահանային, Զօրեջաթիին, Սատանային, Գողին պատմութիւնները, այսինքն ամէն բան՝ բաց ի... պատասխանէ և «սխալ»ներու խնդրէն: Անոնք որ գիտակից էին և գնահատող Ելքէնճեան էֆ. ի լեզուական հմտութեան ու գրական կարողութեանը, ցաւ դգացին կարգաւով Կօնքուռներու թարգմանչին անձա՛սրամտութիւններն ու գռեհիկ խօսքերը իր քննադատին նման լուրջ անձնաւորութեան մը դէմ, երբ Բիւզանդիոն իմքագրական Յայտարարութեամբ մը եկաւ փարատել այս տպաւորութիւնը, ու զօրեղապէս շնչտեց իր իսկ կարծիքը:

Աւասիկ այդ յայտարարութիւնը. —

«Մեր այսօրուան թիւով հրատարակեցինք Պրն. Գ. Մալխասի երկրորդ ու վերջին յօդուածն իր անվերջանալի գրական վէճերուն վրայօք: Ինք յատուկ նամակով մը կոչում ըրած էր մեր անկողնիակալութեան, փափաք յայտնելով իր ընդդիմախօսներուն պատասխանելու այն սիւնակներուն մէջ իսկ ուր արձանագրեր էինք մէկ մասն անոնց դիտողութիւններուն իրեն դէմ: Առաջին ու վերջին անգամ ըլլալով, չենք մերժեր իր այս խնդիրքը, բայց նաեւ պէտք է ըսենք անկեղծօրէն թէ իր գրածները նպատաւոր տպաւորութիւն մը չթողուցին մեր մտքին վրայ: Նախ և առաջ, թող ներէ որ դիտել տանք իրեն թէ իր հրատարակած թարգմանութեան համար իր գրչով իսկ չապլած գովեստներն աւելի խնդուք կը պատճառեն քան համոզում կը գոյացնեն, որովհետեւ հեղինակի մը իր հեղինակութեան և թարգմանչի մը իր թարգմանութեան համար հրատարակաւ տուած տարապայման գովեստ

ներն ի՞նչ կարեւորութիւն կրնան ունենալ իբր պատասխան այնպիսի քննադատներու որք «որոշ սխալներ» մատնանիչ կ'ընեն այն աշխատութեանց մէջ: Եւ յետոյ, Պ. Գրիգոր Մալխասի երկու յօդուածները բացարձակապէս խաբուսիկ և՛ բուն բառն ըսենք՝ խաբէական հանգամանք մը ունին, որովհետեւ ինք երկու յօդուածներն ալ կըսկսի իր «սխալները» մատնանիչ ընողներուն պատասխանելու յայտարարութեամբ, բայց միշտ կը խուսափի և չի պատասխաներ. այլ ընդ այլոյ միջանկեալ առասպելներով սիւնակներ կը գրաւէ, բայց ամենեւին չի փորձեր հերքել այն բացորոշ դիտողութիւններն որք ուղղութեան իրեն դէմ, ցոյց տալով որ ինք տեղ տեղ սխալ հասկցեր է ֆրանսերէն ընագրերն և սխալ ի կիր արկեր է հայերէնը: Մեր Հայկաբաններուն այս աստիճան չհաւանող մէկը գոնէ անսխալ աշխարհաբար մը գրել կարենալու էր, մինչ իր հայերէն ձեռագիրը լի է տառասխալներով, և մինչդեռ այնքան կը պարծենայ իր ֆրանսագիտութեամբ, իր ձեռամբ ընդօրինակած ֆրանսերէն տողերուն մէջ ալ գոնէ ֆրանսական կէտադրութեան սխալներ անպակաս են: Պրն. Մալխաս, եւրոպեան վարչութեան մը մէջ աշխատած ըլլալով տարիներէ ի վեր, գործնական ֆրանսերէնի վարժութիւն մը ունի, անօխտելի է այդ: Բայց իր կեանքին մէջ ֆրանսերէն չատ խօսած և նոյն իսկ ֆրանսերէն վէպ չատ կարդացած ըլլալը բաւական ապահովութիւն մը չէ ֆրանսերէն գիրք մը ճշգորէն հայերէնի վերածելու, զի ատոր համար պէտք կայ երկու լեզուներուն ալ «դասական» հմտութեան, և թարգմանութեան այն վարժութեան որ երկու լեզուներու քերականութիւններուն, բառերուն և ասացուածքներուն երկար ժամանակեայ բաղդատական կիրառութեամբ միայն ձեռք կը բերուի. և այս դասական հմտութեան և այս թարգմանական վարժութեան մէջ է որ Պրն. Գ. Մալխաս բաւական խակ երեւցաւ իր Կօնքուռի թարգմանութեան առթիւ: Պրն.

Մալխաս հարկ էր որ բացայայտ պատասխանէր իր սխալները մատնանիչ ընողներուն, հաստատելով թէ ինք անոնցմէ աղէկ հասկցեր է ֆրանսերէն ընագրերն և աւելի ճիշտ ի կիր արկեր է անոնց հայերէնը: Յորչափ չկատարեց այս անխուսափելի աշխատութիւնը, ինքզինք, իր ֆրանսագիտութիւնն և իր թարգմանութիւնը գովելու տարփողելու համար չռայլած տողերը, ներուի մեղ ըսել, աւելի ծիծաղելի ըրին զինք: Իսկ մեր Հայկաբանները ձաղկելու իր անճարակ, իր անճաշակ փորձերը ցոյց տուին միայն թէ ինք, գրականութեան կարծեցեալ մշակ, խիստ քիչ կը հասկնայ դասական հմտութեան: Ինք ֆրանսերէն լրագրերու և ֆրանսերէն վէպերու ընթերցումով անած քիչ մը տարօրինակ ուղեղ մ'է, և իրարմէ խիստ տարբեր նիւթերու վրայ կրնայ ճոռմաբանել սալօններու մէջ: Բայց վստահելի միջնորդ մը չէ ֆրանսերէն միտքեր հայացնելու, և Հայ հասարակութեան մատուցանելի գրական պաշար մը հայթայթելու լըրջօրէն»:

Բիւզանդիոն, Թ. 2958, Մայիս 30

Կը յուսանք թէ այս «կարճ և ազդու» քննադատականէն ետք, որ գերադանցեց իր նախորդները, «Դեռահաս միջակորեար»ին թարգմանիչը կը համոզուի այլեւս թէ խնդրէն չեղումները, խեղաթիւրումները, ասկէ անկէ քաղուած մանրավէպերով խառն ծաղրաբանութիւնները անբաւական են զինքը չքմեղացնելու. եւ եթէ երբեք, անըմբռնելի յամառութեամբ մը, չուզէ այլեւս լուրթեան ու մոռացութեան տալ ինքզինքը, — ինչ որ ամէնէն իմաստուն ճամբան պիտի ըլլար իր դիրքին մէջ գտնուողի մը համար, — գէթ վիճաբանութեան հիմնական կէտին, սխալներու կէտին դառնայ, եթէ երբեք պիտի փորձէ նորէն երեւնալ որ եւ է թերթի մէջ... բաց ի Մասիսէ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

ԽՈՏՈՐ ՔԱՅԼԵՐ

(ԳԱԻԱՌԻ ԿԵԱՆՔԷՆ ԴՐՈՒԱԳ)

Թէն դիրքը փափուկ, սակայն անշուշտ վիրաւորել չէ նպատակնիս համեստութիւնը Օր, Ա. Բարունակեանին(?) որու «Սիրել թէ Գթալ» վերտառութեա՛ր «Էնթէրվիու» տեղնուեցաւ Ծաղիկ կանանց յատուկ չաքաթաթերթի 33րդ թիւին մէջ:

Եւ մենք դեռ կ'ողբանք գրականութեան անունով գաւառացի կիներու յետնեալ և տգէտ վիճակը...

Որչա՛փ պիտի օգտուէր գրականութիւնը, եթէ երբեք այսօր գաւառի խորէն ամէն անոնք որոնք գրելու մարմաջը ունին իրենց մէջ, փորձէին նուիրուիլ գրական—կնոջական որոշ արտադրութիւններու, այն ձեւերով որով կարելի կըլար պատկերացնել ընտանեկան բազմերանգ հարցեր չօչափող կեանքի դրուագները:

Անհետեւելի ուղի մը չէ յորմէ պէտք է ընթանայ ամէն գրող, ո՛ր դասակարգին ալ պատկանի: Ինչո՞ւ համեստ փորձերու սահմանին մէջ չհասնիլ բաղձացուած կատարելութեան, ստանձնելով դերը ընտանեական շինիչ գործունէութեան մը:

Իրաւ է որ հեշտ ու դիւրին չէ այնքան որքան կ'երեւակայենք, լքանել գրական ուղղութիւն մը որուն կոչուած է հետեւիլ գրող մը, ապակինած իր գրչին: Սակայն կ'արժէ և անհրաժեշտօրէն պէտք է որ ամէն գրող որ կուզէ ինքնայատուկ համբաւ մը ստեղծել լրագրութեան մէջ, իր առջի քայլէն իսկ փոխանակ անհրապոյր, տգեղ և լպիրշ նիւթերով և իրերով զբաղելու, որոնք թերեւս օր մը զինք կ'առաջնորդէն անել անդունդի մը եզրը և խորտակել իր համբաւն ու անունը, փորձէ նուիրուիլ որոշ ուղղութեան մը կուտանին վրայէն ընթանալ և ստեղծել ճշմարիտ ու սիրուած անուն մը:

Երբ անդին գաւառին ծոցը լեցուն է ինքնատիպ էջերու և ապրուած կեանքերու բազմափուլ դրուագներու նիւթերով, ո՛ւր

չեն պակսիր գեղջկական հմայիչ և գաւառական զմայլելի տեսարաններ, ընտանեկան բարուց վարուց և սովորութեանց ու աւանդութեանց ուսուցիչութիւնի նիւթեր, ինչո՞ւ ասդին խոտորելով սոյն ուղղութիւնէն՝ հետեւինք անձնական տգեղ տեսարաններու, հեռի բարոյականութեան դրոշմէն և ձուլուած աղտոտ բովերու մէջ:

Ասիկա ցեղային անկում մըն է, արժանի արգահատանքի:

Խորտակուած պատույ մը պաշտպանութիւնը չէ որ պիտի փորձեմ ստանձնել աստ, այլ մեզի յատուկ ցեղային պակսութեան մը մատնանշումն է զոր կուզեմ ի մէջ բերել:

Տող մը բան արտադրել, որուն նիւթը և եթ անմեղ, և յոյժ բարձր ու պարկեշտ դասու ընտանիքներէն յարգուած, գնահատուած, պարտաճանաչ կրթական պաշտօնեայ ուսուցչուհւոյ մը շուրջը դառնայ, կարծեմ... բարձր գնահատումի և ոսկեմետալի արժանի է:

Ակնարկուած գրութեան առթած տխուր եւ ցնցիչ տպաւորութիւնը դեռ իր նախկին թափին մէջ կը գտնուի, երբ մենք յանուն ճշմարտութեան եւ ի պատիւ մեր համայնքին կը մղուինք այսու յայտնել կատարեալ ցաւ և պժգանք:

Երբ մէկ կողմէն գրողները կ'այապանենք իրենց խոտոր քայլերուն հա՛ւար, մոռնալու չենք անշուշտ ճշմարտապէս ցաւակցիլ այն լրագրողներուն որոնք իրենց էջերը սիրով կը բանան այդպիսի անուանարկիչ եւ վարկարեկիչ գրութեանց:

Ծիչդ սա բառերով է որ կը քաջալերէ Ծաղիկի խմբագրութիւնը այդ տեսակ տափակ եւ տգեղութեան դրոշմը կրող գրութիւնները իր նոյն թուոյն առաջնորդող յօդուածին մէջ. —

«Ասիկա գաւառացի կնիկներու վերածնունդ է թեան շրջանի մը ստոյգ նախադուռը ըլլալ «կերեւայ, զոր քաջալերելու համար խըմբագրութիւնս Պօլսականներէն նուազ պահանջ կոտ ընդունելութեամբ մը կը զատէ «անոնց գրուածքներուն մէջերէն լաւագոյնս «ները, ստորեւ նշանակելով նաեւ իւրաքանչիւր»

«քանիւր գրողի բնավայրը, նախանձը ար-
թընցնելու համար այդպէսով ամէն գաւա-
ռային իգականի»:

Զէ', չէ', աղնիւղ Հայկանոյ Մառք, ձեր
գաւառացի ընթերցողուհիները կուզեն որ
Ծաղիկի խմբագրութիւնը մնայ այն խիստ
անմատչելիութեան մէջ, եւ այս տեսակ գը-
րութեանց համար «Խմբագրութիւնը Պօլսա-
կաններէն նուազ պահանջկոտ ընդունելու-
թեամբ» մը չվերաբերուի երբեք, հիւընկա-
լելու համար եւեթ պատուազարդ սոյնօրի-
նակ ինքնաստեղծ էնթէրվիուներ... որոց
հեղինակին ո՞ր սեռի պատկանիլը եւ ի՞նչ
անձնական տեսակէտով հրապարակ գալը
կ'անգիտանայ Ծաղիկի խմբագրութիւնը, մը-
ղելով բացարձակապէս իր պատուաւոր գա-
ւառացի ընթերցողուհիներն այն գաղափարին
թէ ուրիշ առթիւ մըն ալ իրենց մաքուր

պատուոյն հետ կը խաղայ ուրիշ մը նոյն
թոյլտուութեամբ:

Ինչպէս գրողի մը որոշ ուղղութեան եւ
դաւանանքի մը հետեւիլը անխուսափելի
պայման կը սեպենք, նոյնպէս լրագրութեան
պարտականութիւնն է զսպել որոմը ցորենէն՝
եւ յոռին բարիէն, որպէս զի լրջութեան եւ
պատուաւորութեան սահմաններէն անդին
չանցնի ամէն ոք. եթէ ոչ՝ իրեն համար չի-
ռաժ համբաւ եւ համակրանք մը կը
փրուէ ակնթարթի մը մէջ եւ «հիւրն ու
հիւրնկալող կը լինին հեւան» ինչպէս կըսէ
գաւառացիին առածը:

Խոտար քայլերով ճամբայ չկտորուի:

ՅԼԹԱԿԻՑ «ՄԱՍԻՍ»Ի

Աջանց

ԸՈԳԻՐՆ ԿԱՐՕՏԸ

Տիրոջ հոգւոյն լոյս կաթումին կարօտով
Ներաշխարհիս կը մարի բոցը բըժոտ,
Սպասումի յոյլ վայրկեաններս հոգեխռով
Զիս կը տանին ցընորքի գոգն արհաւրոտ:

Ներաշխարհիս կը մարի բոցը բըժոտ
Արցունքներու յորդ հեղեղին տակ լըռին,
Հոգեկան կոյս ըզգայութիւնքս անաղօտ,
Երկուանքին հեղգ բըրտութեան մէջ կը թաղկին:

Սպասումի յոյլ վայրկեաններս հոգեխռով
Ալ կ'ըսպուծեն իրենց վաղքին մէջ անձայն,
Դուժ մարմինին ամբարհաւած գըրգանքով,
Կը զահանդիմ իմ ըստուերէս ընդունայն:

Մի՛ ղիս տանիք ցնորքի գոգն արհաւրոտ,
Ո՛վ վայրկեաններ աններազգած, անխռով,
Թողէք աշխոյժ սլացքով երթամ Տիրոջ մօտ,
Անոր հոգւոյն լոյս — կաթումին կարօտով:

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

Իզմիր

“ՈՒՂՂՈՒՄՆԵՐ”, Ը ՈՒՂՂՈՒԱԾ

Մասիսը մամուլի յանձնուելու վայր-
կեանին՝ Ելքէնճեան էֆ. է ստացանք հետեւ-
եալ նամակը զոր հաճութեամբ կը հրատա-
րակենք:

Պ. ՄԱԼԽԱՍ «ԿԸ ՅԻՇԷ», ԴՆԴԵՄ ԲԱՅՐ

Մասիսի Խմբագրութեան ուղղեալ նա-
մակի մը մէջ (տես Մասիս 1906 Մայիս 27)
Պ. Մալխաս «Դնդեմ» բային ուղղագրու-
թեան պատասխանատուութիւնն իր վրայ
կ'առնու, ըսելով թէ «ատի տպագրական
սխալ չէ»: Կ'առարկէ թէ Բագրատունւոյ
բնագիրն աչքի առջեւ չէ ունեցեր, որպէս-
զի ուղիղ ընդօրինակէր անկէ, այլ «յիշո-
ղութեամբ առաջ բերեր է Դնդեն Դար-
նոցը»: — Նախ՝ ինչպէս կարելի է յիշել կամ
յիշողութեամբ առաջ բերել բաներ որ գո-
յութիւն չունին: Եթէ Դնդեմ բային մատե-
նագրութեանց մէջ յաճախ գործածութիւնը
տեսնուի է Պ. Մալխաս, և անոր գաղափա-
րովը լեցուած, զայն յառաջ բերեր է մտքի
բնական օրէնքի մը համեմատ, ըսելիք չու-
նինք: Բայց կարո՞ղ է արդեօք ցուցնել թէ
ո՛ւր տեսնուի է այս բային գործածութիւնը:
Իսկ եթէ չէ տեսած կամ չէ կարդացած և
չտեսած ըլլալով հանդերձ կը յիշէ, կը
խնդրեմ ըսէք թէ ի՞նչ ածական կրնայ տըր-
ուիլ մարդու մը որ չեղած բաներ կը յիշէ:
— Առձեռն Բաղդադին «Դնդիւն»ին փարեր
է պարոնը, նախ թո՛ղ գիտնայ թէ Բառ-
զրոց մէջ գտնուած ամէն բառի անխտիր
յարգ չընծայուիր. կը գտնուին անոնց մէջ
խարմնայ (աբշա) քարեր ալ, զորս աղա-
մանդի հետ չիփթել տգիտութիւն կ'ըլլայ.
(թո՛ղ որ մեր կարծիքն է թէ Դնդիւն սխա-
լագիր բառ մ'է, որուն ուղիղն է Դնդիւն),
երկրորդ՝ կը դիտենք որ հմուտ պարոնը ա-
պաստաններ է «Ասա՛նկ ալ կ'ըլլայ, անա՛նկ
ալ կ'ըլլայ»ի դրութեան: Կը յիշենք որ Ժա-
մանակաւ Մ. Շամտանճեանի խմբագրապե-
տութեամբ հրատարակուող Ծաղիկ չաբա-

թաթերթին մէջ Վենետիկեան Դպրոցին լեզ-
ուական սկզբանց վրայ զրարանելու պահուն
Պ. Մալխաս բողոքի աղաղակներ կ'արձա-
կէր, ըսելով թէ «Ո՛չ, Զարգացելոցը շատ
առաձգական է. հիմնուած է «Ասա՛նկ ալ
կ'ըլլայ, անա՛նկ ալ կ'ըլլայ»ի դրութեան
վրայ (տես՝ Ծաղիկ 1903, թիւ 36, էջ 411,
սիւնակ 3րդ): Իսկ հիմա սուր յիշողութեան
տէր պարոնը ի՛նք ելեր կը պնդէ հրապա-
րակաւ թէ Ասա՛նկ ալ կ'ըլլայ, անա՛նկ ալ
կ'ըլլայ: Ի՛նչ հաստատամիտ մարդ:

Ըսած էինք իրեն Բիւզսեդիւնի Մայիս 22
թիւով թէ «Պարոնը թո՛ղ նախ ՈՒՂՂԱԳՐՈՒ-
ԹԻՒՆ սորվի»: Ասոր փոխարէն ներամիտ
պարոնը կը պատասխանէ Մասիսի մէջ թէ
«մենք պէտք չունինք իրենցմէ (հայկաբան-
ներէն) սորվելու Գրելու Արուեստը»: Մեր
Ուղղագրութիւն (orthographe) բառը չփո-
թեր է Գրելու Արուեստին (Art d'écrire)ին
հետ, կա՛մ տգիտութեամբ կա՛մ խաբէու-
թեամբ:

Իսկ մենք կը յիշենք Կիկերոնի հռչակա-
ւոր խօսքն առ Անտոնիոս. «Մտաց տէ՛ր
իցես դու»:

ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԵԱՆ

Զ. Տ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆԻ երկու կարեւոր
հրատարակութիւնները. — Դոքսեական Բա-
նաւան (հայերէն անգլիէրէն) որ կը պա-
րունակէ 40,000է աւելի բառեր, ասու-
թիւններ և ոճեր: — Դին լաթակաղմին՝ 35
ղրշ: — Նոյն հեղինակէն Զորեկեզուեան խօ-
սակցութիւն (հայ., գաղղ., անգլ., գերմ.)
բաժնուած երեք մասերու, բառագիտու-
թիւն, խօսակցութիւններ, նամականի: —
Դին լաթակաղմին՝ 12 զրշ: — Վարժարանաց
համար մասնաւոր զեղչ: 1—10

ՍԻՆԿԼԻՐԻ գեղարուեստական 4րդ Յու-
ցահանդէսը բացուած է Բերայի ընդէ. Տնո-
րէնութեան սրահներուն մէջ, Պօն-Մարշէի
դիմաց: Յուցահանդէսը ամէն օր բաց է և
մուտքը ազատ:

ՖՐԱՆՍԱՅԷՆ ԴԵՊԻ ՊՐԱԶԻԼԻԱ

(ՏՈՒՔԸ. ԼԵՌՈՒՆ ԳԱՐԼԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ)

— Ո՛վ է այս մարդը, հարցուց նաւապետը, զսպուռած ջղազրգուծեամբ մը:

Պատմեցի իրեն՝ Քամամիւի մէջ կատարած պտոյտնիս և ենթադրեցինք թէ պառնոն կ'ուզէր առաջնորդին վարձքը վճարել: Բայց այս վարձատրութեան գործը ժամ մը երկարեցաւ: Նաւապետը կրակ կտրած, կը սպառնար նաւակի մը մէջ նետել ու ճամբել օտարականը, մինչ ներսը խորհրդակցութիւնը կ'երկարէր. ու չէինք կրնար թափանցել անոր գաղտնիքին: Միտքերնուս կրնաք անցնիլ, թէ այդ միջոցին պառնոն իր կեանքին հետ կը խաղար, սակարկութեան մտած ըլլալով ուրիշ զբօսանաւի մը գնման համար ուր ինք կատարեալ տէր ըլլար, ի զուր ջանալով՝ ձեռքի բողբոջին օգնութեամբ՝ աչքերն արցունքով լեցուն, կատաղած սրտով, իր միտքը հասկցնել Քամամիւի խեղճուկ ձկնորսին որուն ձեռքը կը գտնուէր իր ճակատագիրը:

Վերջապէս տեսակցութիւնը աւարտեցաւ, մեր շոգեմակոյկը իր տեղը վերադարձուց նաւուղիդը ու նաւապետին բարկութիւնը իջաւ:

Ժամ մը վերջը, առանձին կը պտտէի կամրջակին վրայ, երթալ պառկելէ առաջ, երբ հովը իմ առջիս քնեց ծալուած թուղթի կտոր մը: Չեմ գիտեր թէ ի՞նչ հետաքրքրութեանէ մղուեցայ՝ զայն գետնէն վերցնելու, բանալու և ուշադրութեամբ աչքերս վրան սեւեռելու, խցիկներու ներքեանքը մտած պահուս: Նախ նշմարեցի՝ կապար գրիչով արագապէս ուրուադռուած նկար մը որ նաւու մը յատակածելը կը ներկայացնէր, յետոյ թուանշաններ գրուած էին՝ տօլարով, ֆրանքով, սդէրլինով: Ետոյ, կիսատ բառեր, անհասկնալի լեզուով մը,

որոնց մէջ աչքիս կը զարնէին միայն ժագերանտէ անունը ու yacht բառը: Կարեւորութիւն չտուի այդ թուղթի կտորին զոր ծովը նետեցի:

Պ. տը Կռավալի բաղդաւորութեան վրայ վերջին արեւը կը ծագէր: Ոտորենկ քունի մէջ անցուած գիշերէ մը ետք, չեմ գիտեր ինչ յամառ նախազգացումով արթնցայ, թէ այդ օրը վճռական պիտի ըլլար անպատճառ, և թէ իմ արկածախնդրութիւնս նոր երեւոյթ մը պիտի ստանար: Լաւ կը յիշեմ որ, անկողնէս ելլելուս, անբացատրելի անձկութեամբ մը համակուեցայ, ծանր պատահարի մը երկիւղովը որ կեանքերնուս ընթացքը պիտի փոխէր. մեքենայի արկած մը, փոթորիկ, հիւանդութիւն: Ասոնցմէ լաւագոյն բան մը:

Ժամը վեցուկէօին, արդէն իսկ կամրջօջակին վրայ կը գտնուէի: Հանդարտօրէն կը յառաջանար Քաթարինան հիանալի ծ լեզրի մը երկայնութեամբ, որուն խորը չքեղ անտառ մը կը տարածուէր: Մտախոհ կեցած էի, միտքս տարուբերելով փոփրալից ալիքներուն վրայ, երբ պառնոն՝ ինքն ալ ինծի պէս կանուխ արթնցած, երեւցաւ կամրջակին վրայ, և համարձակ ձեւով մը դէպ ի իմ կողմս գալով, ձեռքը ինձ երկարեց ու սիկառէթ մը հրամցուց ինձ:

— Բարիլո՛յս, տօքթէօս:

Նրջանիկ մարդու մը երեւոյթն ունէր: Կեանքը վայելելու ուրախութիւնը կաղաւթած էր զինքը, իր նայուածքը աւելի վառ դարձնելով ու ձեռքի սեղմումը աւելի ջերմագին:

(Շարունակելի)

ԽՐԱՊՈՐՏԱԿԱՆ ԽՈՐԵՐ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ, Վսեմ. Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի որդին՝ Տիրան պէյ, երրորդ քարտուղար Պրիւսէլի օսմ. դեսպանատան, բարձրացած է Սանիէի աստիճանին: Կը շնորհաւորենք Տիրան պէյ Նորատունկեանը՝ Կայսերական բարեհաճ գնահատման արժանանալուն համար, և այս բերկրալի առթիւ մեր խնդակցութիւնները կ'ուղղենք նաեւ իր Վսեմ. հօրը:

Առան ժողովը իր չորեքշաբթի օրուան նիստին մէջ, որ գումարուեցաւ Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ, նկատողութեան առաւ հանգուցեալ Յովհաննէս էֆ. Մանուկեանի կտակը եւ խորհրդակցութիւն կատարեց կտակագրին Վազֆիյէի գործադրութեան եղանակին վրայ, որոշելով առ այս հարկ եղած գործողութեանց ձեռնարկել չանգուցելոյն եղբայրը, Սէնեքերիմ էֆ. Մանուկեան, Ս. Պատրիարքին ուղղուած գրով մը պատրաստակամութիւն յայտնած էր իր եղբոր կամքը կատարելու և կտակին գործադրութեան համար ալ իր օժանդակութիւնն ընձեռելու: Ժողովը գոհութեամբ լսեց այս պարագան: — Կըսուի թէ հանգուցելոյն թողած գումարն է 2750 ոսկի, իր և իր կնոջ մասէն ետք յատկացուելու համար աղքատ տղոց կրթութեան և դաստիարակութեան:

Օրթագիւղի ազդ. երկսեռ վարժարաններուն մանկապարտէզի հանդէսը, որ կատարուեցաւ կիրակի օրը, գոհունակ տպաւորութեամբ մը համակեց երկսեռ ներկաներու խումուն բաղմութիւնը որ կը բաղկանար ծնողքներէն, թաղին կրթասէր ազգայիններէն և ուրիշ ծանօթ հրաւիրեալներէ: Կըցաւինք որ Մասիսի էջերուն անձկութիւնը և նիւթերուն առատութիւնը չեն ներեր մեզ մանրամասն նկարագրութիւն մը նուիրել կրթական այդ գողարիկ հանդէսին, ինչ որ կատարեցին արդէն օրաթերթերը: Ուրիշ

առթի մը վերապահելով յայտնել մեր տպաւորութիւնները և տեսութիւնները, — իբրեւ Օրթագիւղի և իբրեւ նախկին աշակերտ Ս. Թարգմանչաց վարժարանին, — այսօրուան համար կը շատանանք բերկրութեամբ արձանագրել թէ՛ մանկապարտէզին և թէ՛ երկսեռ վարժարաններուն բարեկարգ ու յառաջադէմ վիճակը՝ իրենց նիւթական համեստ պայմաններուն համեմատութեամբ: Թաղ. Խորհուրդը, և մասնաւորապէս անոր անդամներէն Երուանդ էֆ. Եոսեփեան՝ որ ստանձնած է վարժարանին հսկողութեան հոգը, իբրեւ հոգաբարձու, խղճամիտ ու անձնուէր աշխատութեան մը արդիւնքները երեւան բերաւ, որոնք անկեղծ շնորհաւորութեանց արժանացան: Գնահատութեան ոչ նուազ ջերմագին հարկ մը նուիրուեցաւ նաեւ մանկապարտէզին կազմակերպիչ ու վարիչ և Հռիփսիմեանց վարժարանի տեսչուհի Օր. Արմաւենի Փափագեանի, որ իր խնամոց յանձնուած մանուկներուն ֆիզիքական ու մտաւորական կրթութեան հաւասարապէս հոգածու գտնուած էր:

Ն. ՇԱՆԱԿԱՆ ՕՍՈՒԹԻՒՆ

Ծանօթ վաճառական Թաղէոս էֆ. Նահապետեանի Ազն. քենիին՝ Օր. Իսկուհի Պէշիբեանի նշանախօսութիւնը Յարութիւն էֆ. Սինանեանի հետ, կատարուեցաւ անցեալ կիրակի, Մալթէքէ, Նահապետեանց ամբարանոցին մէջ, երկու կողմի ազգականներու ներկայութեամբ: Սինանեան էֆ., ճարտար արուեստագէտը, — որուն անունը այժմէութիւն մը ստացաւ վերջերս, իր սարքած նուագահանդէսին առթիւ, — օրտի և մտքի յատկութիւններով օժտուած կեանքի ընկերուհի մը ընտրած է իրեն, ինչպէս է Օր. Իսկուհի Պէշիբեան, և իրենց նշանախօսութիւնը առիթ եղած է համակիր շնորհաւորութեանց զորս մենք ալ կուղղենք իրենց և Սինանեան ու Պէշիբեան ընտանիքներուն, ինչպէս նաեւ Տէր և Տիկին Թ. Նահապետեանի:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տէր եւ ՏԵՐԵԿ—ՏՈՒՔԻ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՆԵԱՔ Օրագրի

ԱՐՐԱՀԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ

Ի Զ Մ Ի Տ

Կը ստանձնե

Հողերի եւ ծովային ապահովագրութիւններ՝ շահուէտ պայմաններով:

Այլն տեսող գոյիսիօժի գործեր, ներածում, աշտածում եւ մօքսային գործողութիւններ:

Նշանակաւ տալիս արգ դա, ծարաղներու միջոցաւ՝ գումարներ եւ պարզ պատկերներ, զորք քաւթ—բաւթը կրու պարտաւթիւն, Ֆորօկրաֆի-կամեմատ:

Կը հալրա՛րե

«Թամա Սթամբուլ» Անգլ. Տան դաւարիզներէն:

Սօքսոնի, տաղնիկարք բիւնօնէր, շարթակուն վճարումներով:

Ամենավերջին դրութեամբ պիտի լինեն:

Այլն տեսող երկազան ձկան եւ թիթեղագործի մեքենաներ:

Ուշուած քանակութեամբ եւ տեսակով ընտիր եւ հասուէտ թէյեր:

Դուռնային լոնձնարարութիւններ փութով եւ կառարարներ:


3—10

Հասցէ՝

ԱՐՐԱՀԱՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ Ի Զ Մ Ի Տ

PHOENIX ASSURANCE Ltd. Co.

“Ֆ Ի Ն Ի Ք Ս”



ՀԻՄՆԵԱՆ Ի ԼՈՆՏՈՆ 1782 ԻՆ

ՆԱ ԳՈՐԾԷ Ի ՊՈԼԻՍ 1869ԷՆ Ի ՎԵՐ

ՈՆԳԼ. ԱՊՈՆՈՎՈՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ եւ պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,218,000

Ֆիւնիստ տակ հրդեհի դէմ Ապահովագրական Հնկերութիւն մըն է, ծանօթ էր պատաւարութեամբ եւ փառանք մէջ էր անմիջական վճարումներով:

Ֆիւնիստ կ'ապահովագրէ հրդեհի եւ կռիւների դէմ մէկ տեսակ անհատ եւ շարժուն սարքաւոր, յայտնաբերող պայմաններով:

Հնկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՎՆԱՍՈՒՑ. Ցաւով վճարած է տաւել քան 27,000000 ոսկի.

Հնդկ. գործակալ Պալալ եւ գաւառացի:

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վիսայիս խան, Պանք Օթոմանի մօտ Ղալաթիա:

Փոխ գործակալ Ի Պալիս

ՃԻՎԱՆ ԹԵՔԷԵԱՆ

5—10 Զննարար խան

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

ԱՆԲԱ, ՄԵՐ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սերայի Լիսին դէմ

Գո. Նո. Շր. օրերը առաւօտեան կանու

խան մինչեւ իրկիւտան Ժ. 11½

Բո. Դո. Ուր. օրերը 6եկ մինչեւ 11½

Կիւսիլի օրերը մասնադրութեամբ 5—10



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՂ. ՓՈԽԱՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտոնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի
ՀՐԴԵՂԻ, ՓՈԽԱՐՈՒԹԻՒՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ. ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄՆԵՐՈՒ ԴԷՄ,

ինչպէս նաեւ ՀԱՅԵՂԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կատարելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ախոյղապէս վճարուած

10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 »

Ընկերութեան ապահովագրութեան վճարուած դրամա-
գլուխ եւ փաստացի հատուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս


64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան
հան, Վոյվոսա, Ղալա թիւ, 5-10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԵՐՃԱՅԻ



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԵՐԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Հէրճայի վաճառատնէ՝ գահարդէններու, տեղի եւ տեղի շրջաններու, գաղան-
կաւոր եւ քոմարի ժամացոյցներու մասնաւոր վաճառութեան շրջան, իր բազմաթիւ լոճ-
արդներուն վաճառութեան ջանքերուն տալով անգամ կը փութայ լայնատեղի թէ ո-
մէն եղանակի լաւանքի վերջին նորմալութեան վրայ պատշաճ ունի տարանջ, հոնակ
եւ աղայոց համար ամէն տեսակ հագուածնեաւ ու անձեւի համար մաշակող վաճառա-
նէր, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէղիներ եւ թօփեղներ ու ամերիկեան կոշիկներ: Ունի
նաեւ կոկորտաւոր, ձեղունի լոմբաւոր, մանակաւոր, եւրոպական ու ամերիկեան գոր-
գեր, գետնի մաշակաւոր, կրօնօթանքաւ ու պատիւը տեղի տեղեկութեան համարելու
թիւններով:

Հէրճայի վաճառատնէր իրականապէս ու լաւօրէն շտապ է հանրութեան
վաճառութեան եւ գահարդէնութեան իր ապրանքներուն աւելանութեան եւ անկիւններու
մաքրութեան, ձեւաւորութեան եւ ամենալաւ համար:

Այս ամէնուն արդեաւ արժէքին վաճառումն է

ԱՆՊԱՌԱՆՈՒՄ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկ մնացեալ գումարին հա-
մար շտապ-կան հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հալթալթի:

Վաճառատնէն հաստատում է

ՄԵՄ-ՇՈՒԿԱՅ. ՈՍԿԵՐՉԱՅ ՄԵՄ ՓՈՂՈՑ ԹԻՒ 13

Անգամ մը այցելել բաւական է համազուելու համար թէ՛ Հէրճայի անմոռելի կող-
մակերպութեամբ մը ի վիճակն է ասո՛ւ գահարդէն իր ամէնէն դժուարեամբ լաւագործները:
Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ:

Սակարկութիւն չկայ:

Շտապեալով վճարման համար հաւաքիչներ մեզ պատրաստ են:

ՆԱԶԱՐԷԹ ԽԱՉԵՐԵԱՆ

Պ Ա Ս Տ Ա Ր Ա Ն

Պոլիս, Մարբունքիւր, Պարնարան խան
Թիւ 26

Ամէն կարգի դատեր կը ստանձնէ եւ խնդրոյ առարկայ եղած քործերու համար թէ՛ բերանայի եւ թէ՛ թղթակցութեամբ բանակցութիւններ կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ, կը խմբագրէ եւ կը թարգմանէ դատերու եւ առեւտրական ու սովորական պայմանագրութեանց վերաբերող թուղթեր: Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր ձրիաբար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ:

Ապահովագրական գործառնութիւններու եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական ընկերութեանց նկատմամբ տնօրէնական եղանակով եւ թիւները ձրիաբար կուտայ:

Կը յանձնարարէ օր մինչեւ օր այս մասին կարեւոր եղած աեղեկութիւնները իրմէ հասցունի, ապահովագրութիւն չի ստորագրուի: Ապահովագրական վիճակի հետաւումն գուժաներու եւ փոխադրութիւններու գանձումներ կը ստանձնէ:

2-10

Դ Ե Ր Չ Ա Կ

Վ Ի Չ Ե Ն Ա Լ Ա Ճ Ա Ն Ա Ն

Ղալաքիա, Հարանք փողոց, քիւ 13

Հաւ տեսնել կերպանքով ու ձեւաւոր կազմուած պատրաստել առաջնորդող, որոնք միանգամայն օժանդակութիւն կը փոխանեն եւ վճարման դիւրին պայմաններ, կրօնական դիմել առ նոր բացուած խանութք, եւ մեծապէս գովազդի միջոց:

2-10

ԱՆԳՂԻԵՐԵՆԷ-ՆԱԵԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

Բ Ր Օ Յ . Վ . Յ . Յ Ա Կ Ո Ր Ե Ա Ն Ի

Սակաւութիւն օրինակներ մնացած են եւ կը ծախսուին Յ Մասթէտեան թղթաւճառատները

Յիւնեաններու, Ամերիկայի խան թիւ 27 Կ. Պ. լի

Գին 60 դր.

Գուտաւոր համար 64 զբ. բոլորի ծախքով

3-10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարճ մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդէռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհի գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐԱ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | } | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ. | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԱԻԻՏԱՐ | | Չարըզ Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կասաբեալ Երաւաւորութիւն:

Մասնահիւղեր գաւառաց բոլոր ֆաղափերուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

5—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ. ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զտա, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարձանէ ստամոքսի, ուղեւթ, միզային ճանրաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին եւ նոր գաղտկան ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց ստամոքսի թանգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զարեքլորթի օգիւր միջոց ձեռք: 4—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Արանց եւ կռնանց ճաշակաւոր հոգեւոր երաւ Պօլիս, Սուլթան—Համամ, Մի. Թիւրք Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն վաճառատան մէջ գտնուած աղբիւրները, օրանց ու կռնանց յատուկ հոգեւորներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն առկուլութիւն, եւ դիւրամտայնի գեղեցկութեան առկուլութիւնն ալ կ'ընծայեն հոգեւորութեան:

Աղամ վարդեան մեծապէս գոյթաւոր է իր բաղամթիւ յաճութեաները: 5—10